ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«19» մայիսի 2021 թվականի N 224

«ՍՊԻՏԱԿԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 20-ԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի թիվ 02-Ն հրամանի 7-րդ կետի՝ ***որոշում եմ.***

2. Ստեղծել «Սպիտակի երաժշտական դպրոց կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 2021 թվականի մայիսի 20-ին անցկացվող մրցույթի մրցութային հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ՝

Անահիտ Գյուլազյան - Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար,

Հանձնաժողովի քարտուղար՝

Հասմիկ Խաչատրյան - «Սպիտակ համայնքի թիվ 1 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն,

Հանձնաժողովի անդամներ՝

Արտակ Մաթոսյան – ՀՀ Լոռու մարզպետի տեղակալի օգնական,

Գարիկ Դանիելյան – «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության վարկային վերլուծությունների վարչության ավագ մասնագետ,

Կարեն Մխիթարյան - Սպիտակ համայնքի ավագանու անդամ:

2.Աշխատակազմի քարտուղար Անահիտ Գյուլազյանին՝ ապահովել սույն որոշման մասին մրցութային հանձնաժողովի անդամներին սահմանված կարգով և ժամկետներում տեղեկացումը:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. մարտի 19
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«19» մայիսի 2021թ. № 225

ՄՀԵՐ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով և 50-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1129705 վկայականը և Մհեր Սերյոժայի Պողոսյանի դիմումը՝ *որոշում եմ.*

1. Մհեր Սերյոժայի Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Ս.Ավետիսյան փողոցի վրա գտնվող 06006 522-10 կադաստրային ծածկագրով 0,046 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել «քաղաք Սպիտակ, Ս.Ավետիսյան փողոց, թիվ 211» հասցեն:
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. մայիսի 19
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«19» մայիսի 2021թ. № 226

ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 13-Ի ԹԻՎ 188 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 2021 թվականի մայիսի 17-ի «Գույքի նկատմամբ իրավունքների (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին» թիվ Կ-17052021-06-0025 որոշումը՝ ***որոշում եմ.***

1. Փոփոխություն կատարել Սպիտակ համայնքի ղեկավարի 2021 թվականի ապրիլի 13-ի «Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասի գործառնական նշանակությունը փոխելու և հասցե տրամադրելու մասին» թիվ 188 որոշման 2-րդ կետում նշված «97» թիվը փոխարինել «99» թվով:

2. Սույն որոշման 1-ին կետով կատարված փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. մայիսի 19
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«19» մայիսի 2021թ. № 227

ԱՆՉԱՓԱՀԱՍ ԱՐԹՈՒՐ ԴԵՐԵՆԻԿԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության 9-րդ կետի 4-րդ ենթակետի «գ» պարբերությամբ, հիմք ընդունելով Դերենիկ Վանիկի Հովսեփյանի և Արևիկ Ռազմիկի Հովսեփյանի ներկայացուցիչ Վանիկ Եփրեմի Հովսեփյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Թույլատրել օտարել Լեյլի Արշալույսի Գևորգյանին, Վանիկ Եփրեմի Հովսեփյանին, Դերենիկ Վանիկի Հովսեփյանին, Արևիկ Ռազմիկի Հովսեփյանին և Արթուր Դերենիկի Հովսեփյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Վարպետաց թաղամաս, Երիտասարդության փողոց, 6 փակուղի, թիվ 8 հասցեի բնակելի տունը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 06102016-06-0071 վկայական՝ տրված 2016 թվականի հոկտեմբերի 6-ին)՝ անչափահաս Արթուր Դերենիկի Հովսեփյանի մասով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. մայիսի 19
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«19» մայիսի 2021 թվականի N 228

ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԿՈՄԻՏԵ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 21-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 23-ի N165-Ն հրամանի 9-րդ և 10-րդ կետերի՝ ***որոշում եմ.***

1.Ձևավորել ներքին աուդիտի կոմիտե հետևյալ կազմով.

Նախագահ՝

Գագիկ Սահակյան – Սպիտակ համայնքի ղեկավար.

Անդամներ՝

Անահիտ Գյուլազյան - Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար.

Հենրիկ Միրզոյան - Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի պետ,

Արման Ավետիսյան - Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, տրանսպորտի և կոմունալ սպասարկման բաժնի պետ.

Քարտուղար՝

Տիգրան Հակոբյան - «ՔՐՈՈՒ ԸՆԴ ԱՍԱՏՐՅԱՆՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության աուդիտոր:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Սպիտակի քաղաքապետի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի «Ներքին աուդիտի կոմիտե ձևավորելու մասին» թիվ 272 որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում համապատասխան անձանց պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ.մայիսի 19
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«21» մայիսի 2021թ. № 229

ՄԱՐԻԱ ԱԼԻԿԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ «ՍՊԻՏԱԿԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 14-րդ, 84-րդ, 95-րդ հոդվածներով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 1.1-ին մասերով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02–Ն հրամանով հաստատված կարգի 72-րդ կետով, հիմք ընդունելով «Սպիտակի երաժշտական դպրոց կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի վերաբերյալ մրցութային հանձնաժողովի 2021 թվականի մայիսի 20-ի որոշումը և Մարիա Ալիկի Գասպարյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.2021 թվականի մայիսի 21-ից Մարիա Ալիկի Գասպարյանին նշանակել «Սպիտակի երաժշտական դպրոց կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով:

2.Աշխատավարձը՝ համաձայն հաստատված պաշտոնային դրույքաչափի՝ 130 000 (հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ: Աշխատավարձը համարել փոփոխված Սպիտակ համայնքի ավագանու կողմից պաշտոնային դրույքաչափի փոփոխմանը համապատասխան:

3. Աշխատանքի ու հանգստի ժամանակը և աշխատանքային գործառույթները՝ համաձայն աշխատանքային պայմանագրի:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ.մայիսի 21
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«21» մայիսի 2021թ. № 230

ՎԱՉԱԳԱՆ ՀՐԱՉԻԿԻ ԽԱՌԱՏՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով, 72-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի «բ» ենթակետով, հաշվի առնելով, որ Վաչագան Հրաչիկի Խառատյանը 1990 թվականից, առանց իրավաբանական ձևակերպման, անընդմեջ ու բացահայտ տիրապետում է Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող 06-006-0539-0009 կադաստրային ծածկագրով, գյուղատնտեսական նշանակության հողամասերից 0,1468 հեկտար մակերեսով 4-րդ կարգի անջրդի վարելահողը, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 66-Ա որոշումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 13082020-06-0051 վկայականը և Վաչագան Հրաչիկի Խառատյանը դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող 06-006-0539-009 կադաստրային ծածկագրով, գյուղատնտեսական նշանակության հողամասերից 0,1468 հեկտար մակերեսով 4-րդ կարգի անջրդի վարելահողը, առանց մրցույթի, ձեռքբերման վաղեմության իրավունքով, վարձակալությամբ, 25 տարի ժամկետով, 903 ՀՀ դրամ տարեկան վարձավճարով տրամադրել Վաչագան Հրաչիկի Խառատյանին (ծնված 27.11.1958թ.):

2. Վաչագան Հրաչիկի Խառատյանի հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր, որից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

3. Աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնին՝ սահմանված կարգով փոփոխություն կատարել հողային հաշվեկշռում:

4. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին սահմանված կարգով և ժամկետներում ապահովել տարեկան վարձավճարների գանձումը:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի և ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի պետերի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. մայիսի 21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«21» մայիսի 2021թ. № 231

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և 50-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 1-ի թիվ 1054-Ն որոշումը և «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող՝ Ալեք Մանուկյան փողոցի գտնվող 06-006-0235-0003 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված 0,40659 հեկտար մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասին տրամադրել «ք.Սպիտակ, Ալեք Մանուկյան փողոց, թիվ 69» հասցեն:

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. մայիսի 21
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«21» մայիսի 2021թ. № 232

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և 50-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 1-ի թիվ 1054-Ն որոշումը և «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող՝ Մյասնիկյան փողոցի վրա գտնվող 06-006-0271-0129 կադաստրային ծածկագրով 0,19238 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողամասին տրամադրել «ք.Սպիտակ, Մյասնիկյան փողոց, թիվ 104» հասցեն:

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. մայիսի 21
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«21» մայիսի 2021թ. № 233

ԱՅԳԵՍՏԱՆ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԱՎԻԹ ՌԱՖԻԿԻ ՀԱՄԲԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1328-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումներով, հաշվի առնելով, որ Դավիթ Ռաֆիկի Համբարյանի կողմից տիրապետվող՝ Այգեստան թաղամասում գտնվող 06-006-0238-0001 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասից առանձնացված հողամասի փաստացի չափը կազմում է 0,04 հեկտար, որը Դավիթ Ռաֆիկի Համբարյանին կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով, նշված հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ ենթակետերով սահմանված պահանջներին, ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հողամասի վրա մինչև 1989 թվականին կառուցված բնակելի տունը կառուցված է քաղաքաշինական նորմերին ու կանոններին համապատասխան, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, հիմք ընդունելով «Տեխպրոյեկտ» ՍՊԸ-ի եզրակացությունը, «Արտյոմ Սաքանյան» Ա/Ձ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը և Դավիթ Ռաֆիկի Համբարյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Դավիթ Ռաֆիկի Համբարյանի (ծնված 20.01.1964թ.) սեփականության իրավունքը Այգեստան թաղամասում գտնվող 06-006-0238-0001 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային

նշանակության հողամասից առանձնացված 0,04 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի և դրա վրա գտնվող 49,15 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքին տրամադրել «քաղաք Սպիտակ, Այգեստան թաղամաս, թիվ 287» հասցեն:

3. Սույն որոշումից ծագող իրավունքը և տրամադրված հասցեն ենթակա են պետական գրանցման:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. մայիսի 21
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«21» մայիսի 2021թ. № 234

ԱՐԱՅԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇԳՐՏՎԱԾ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ի ԹԻՎ 84 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 2021 թվականի ապրիլի 4-ի «Գույքի նկատմամբ իրավունքների (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին» թիվ Կ-22042021-06-0145 որոշումը և «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման ճշգրտված հաշվետվությունը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Արայիկ Ռաֆիկի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Տեր Սիմոնյան փողոց, թիվ 47 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի ճշգրտված հատակագիծը:

2. Սպիտակ համայնքի ղեկավարի 2021 թվականի փետրվարի 17-ի «Արայիկ Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի վրա գտնվող ինքնակամ կառուցված կիսակառույցն օրինականացնելու մասին» թիվ 84 որոշման մեջ կատարել փոփոխություններ.

1) որոշման նախաբանում և 1-ին կետում գրված «20,3» թիվը փոխարինել «7,90» թվերով:

2) որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետում գրված «38 200» թիվը փոխարինել «15 029» թվով:

3. Ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին Արայիկ Ռաֆիկի Պետրոսյանին համայնքի բյուջեից վերադարձնել ավել վճարված 23 171 ՀՀ դրամ օրինականացման վճարը:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. մայիսի 21
ք.Սպիտակ